

118): Իսկ Տաթեւացւոյն օրով աշխարհիկ դասը բողոքովին թողեր է երկու պահքերը: «Կարգաւորը, կ'ըսէ նա, երեք քառասունք պահեն, այլ աշխարհականը՝ միայն զաղուռնացիցն պահեն» (Քրգ. ձմր. 148): Յայտնի չէ՝ թէ երկու յիսնակաց վերածումն ե՞րբ սկսեր է: Բայց ծագումը կամայականութեան արդիւնք է, ինչպէս կ'երեւի ձեւերու այդ զգալի զանազանութեանէն:

6. — Ճրագարոյցք: — Զատկի եւ Յայտնութեան քառասնորդները կ'աւարտէին հանդիսական նախատօնակով մը, ինչպէս կը լինի դեռ այսօր, ուր կը սկսէր հոգեւոր ուրախութիւնն առաջիկայ մեծ տօնից, եւ որուն կը յարէին Հայք պահոց թեթեւութիւն մ'ալ երեկոյի ճաշին մէջ, զոր Որբելեան կը կոչէ՝ «առնել նառակատիս» (ՅՅ5). բացատրութիւն՝ որ մեզ արդէն ծանօթ է (աստ, 403):

Ուրիշ ազգաց մէջ չկայ ասոր յիշատակը. ընդ հակառակն ըստ «Սահմանդր. Առաքելոց» ծոմը կը տեւէր մինչեւ կիւրակէի հաւախօսը (աստ, 418), եւ օտարներն յետոյ հակառակ կը կոուէին մեր լուծման: Հայ սովորութեան հնագոյն յիշատակը գտած եմ Զ դարուն, Աշտարակեցւոյն կանոնաց մէջ, ուր կը գրուի ա-